

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ԲԱՅԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂ ԲՈՒՀԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Բանալի բառեր – ձևաբանական-բայական նորմ, տեղաշարժեր, տարակարծություններ, գործող դասագրքեր, բայական զուգաձևություններ, անգործածական կազմություններ, ժամանակաձևեր, համեմատական քննություն

Լեզվում կատարվող փոփոխությունները, որպես կանոն, պարբերաբար արձանագրվում են նորմատիվ քերականության գրքերում: Լեզվի զարգացման ընթացքում սովորաբար որոշ անհամապատասխանություններ են առաջանում մի կողմից՝ այդ գրքերում արձանագրված օրինաչափությունների և մյուս կողմից՝ կենդանի լեզվում գործառնող իրողությունների միջև: Եվ դա բնական գործընթաց է, քանի որ լեզուն և մասնավորապես լեզվի ձևային ու ձևախմբատային կառույցները ժամանակի ընթացքում ենթարկվում են բնականոն տեղաշարժերի:

Այս հոդվածում քննարկման առարկա են դառնալու ժամանակակից արևելահայերենի բայական համակարգի¹ ձևախմբատային այն փոփոխությունները, որոնք արձանագրված չեն կամ բավարար չափով արձանագրված չեն գործող բուհական ձեռնարկներում²:

Բայը հայերենում և հավանաբար նաև բոլոր լեզուներում ամենից գործածական և քերականական կարգերով ամենահարուստ խոսքի մասն է, ուստի նրա վերաբերյալ կարծիքները և նաև նրան առնչվող տեղաշարժ – փոփոխությունները շատ ավելի բազմազան են: Դրանք վերաբերում են ինչպես բայակազմությանը և դերբայական համակարգին, այնպես էլ խոնարհման ձևերին, անկանոն և պակասավոր բայերի կազմությանը ևն:

Բայակազմություն: Հայտնի է, որ զգալի տեղաշարժեր կան չ սուկածան-

¹ Նախորդ հոդվածներից մեկում մենք անդրադարձել ենք ժամանակակից հայերենի ձևաբանական, մասնավորապես ձևաբանական-գոյականական նորմի զարգացումներին:

² Նկատի ունենք այսօր շրջանառության մեջ եղած հիմնականում երկու բուհական ձեռնարկները՝ **Մարգարյան Ա.**, ժամանակակից հայոց լեզվի քերականություն, Երևան, 2004 (այսուհետև շարադրանքում՝ ԱՄ), **Խլղաթյան Ֆ.**, ժամանակակից հայոց լեզու, մաս Բ, Երևան, 2010 (այսուհետև շարադրանքում՝ ՖԲ):

ցով բայերի կազմում: Այդ մասին գրել են շատերը¹: Եվ հարցի վերաբերյալ, բնական է, առկա են տարակարծություններ՝ սկսած դրանց ուղիղ ձևերի գործածությունից մինչև անցյալի հիմքի կազմություն և դրանից բաղադրվող ձևերը, որոնք հաճախ հանդես են գալիս որպես գուգաձևեր:

Ա. Մարգարյանը չ ներածանց ունեցող գործածական բայերին (դիպչել, թռչել, կորչել, կպչել, հանգչել, սառչել, ուռչել, փախչել) ավելացնում է **թաքչել**, **փակչել**, **փլչել** բայերը. **թաքչել**-ը համարում է հնաբանություն, իսկ **հալչել**-ի խոսակցական տարբերակ է նշում **հալել**-ը [ԱՄ 365]: Կարծում ենք՝ հնաբանություն պետք է համարվեին նաև մյուս երկուսը՝ **փակչել** և **փլչել** բայերը. առաջինը առհասարակ չի գործածվում արդի լեզվում, երկրորդը փոխարինվել է **փլվել**-ով, իսկ **հալչել**-ի գործածական տարբերակը **հալվել**-ն է: **Արևակ**-ի վիճակագրությունը² ևս հաստատում է ասվածը՝ **թաքչել**՝ 6 / **թաքնվել**՝ 1.236; **հալչել**՝ 85 / **հալվել**՝ 391; **փլչել**՝ 9 / **փլվել**՝ 317:

Միանշանակ չէ մոտեցումը **ուռչել** և **սառչել** բայերի զարգացումների վերաբերյալ: Ակնհայտ է, որ խոսակցական լեզվում այդ բայերի՝ լայնորեն տարածվող անածանց ձևերը (ուռել, սառել) աստիճանաբար մուտք են գործում գրական լեզու և գուգաձևեր են կազմում նաև խոնարհման համակարգում, մասնավորապես անցյալ կատարյալում՝ **սառեցի/սառա**, **ուռեցի/ուռա** են: Եվ ժամանակն է այդ իրողության հետ հաշվի նստելու: Ա. Մարգարյանը պարզապես հուշում է, որ դրանք ժողովրդախոսակցական լեզվում են գործածվում առանց չ ածանցի՝ **սառչել-սառել**, **ուռչել-ուռել** [ԱՄ 365]: Մեր դիտարկումներով և համոզմամբ՝ **ուռչել** և **սառչել** բայերի ոչ ցոյական արմատական ձևերը (**ուռա**, **ուռար**, **ուռավ** են; **սառա**, **սառար**, **սառավ** են), գործածությունից դուրս են մղվում. տարածում են ստանում այդ բայի ցոյական ձևերը (**ուռեցի**, **ուռեցիր**, **ուռեց**, **ուռեցինք**, **ուռեցիք**, **ուռեցին**; **սառեցի**, **սառեցիր**, **սառեց**, **սառեցինք**, **սառեցիք**, **սառեցին**)³: **Արևակ**-ի տվյալներով, օրինակ, **սառչել** բայի համար ունենք հետևյալ պատկերը՝ **սառեց**՝ 343 / **սառավ**՝ 102:

Ա. Մարգարյանը ն սուկածանցով անկանոն բայերի մեջ (անել, դնել, լինել, տանել) ն-ն համարում է բայարմատի անկապտելի մաս և այդ շարքին ավելացնում է ևս երեք բայ (բանալ, թանալ, կենալ): Վերջինները չեն հանդիպում ո՛չ Մ. Ասատրյանի, ո՛չ Ֆ. Խլղաթյանի գրքում: Մեր մոտեցումը

¹ Տե՛ս **Սարգսյանի Ա.**, «Ձ» սուկածանցավոր բայերը հայերենի զարգացման արդի փուլում // «ԲԵՆ», 1989, թիվ 2, էջ 172-179:

² Մեր դիտարկումները փորձել ենք հաստատել **Արևակի** (*Արևելահայերենի ազգային կորպուս*) էլեկտրոնային կայքի տվյալներով: Այս կայքի տվյալները բավականաչափ հավաստի են՝ երևույթի վիճակագրական նկարագրությունը տալու համար. **Արևակ**-ը ամփոփում է մեծ ժամանակահատվածի գրական-լեզվական նյութ (XIX դարի վերջից մինչև 2009 թ.):

³ Ավելի մանրամասն տե՛ս **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, 2011, էջ 63-64:

հետևյալն է. **թանալ**-ը հնացած է, **բանալ**-ը փոխարինվել է **բացել** աններածանց սկզբնաձևով, **կենալ**-ը հարադրությունից դուրս (վեր կենալ) անգործածական է, և ուստի հարկը չկա արդի քերականության մատյաններում այդ բայերը թվարկելու: Ա. Մարգարյանը, հակադրելով այս բայերը երկու արմատական ձևերով, հաստատում է, որ դրանցում **ն**-ն ածանց չէ՝ **անել-արել, բանալ-բացել, դնել-դրել, թանալ-թացել, լինել-եղել, կենալ-կեցել//կացել, տանել-տարել** [ԱՄ 364]: Ֆ. Խլղաթյանը առհասարակ չի անդրադառնում **ն**, չ սուսկաձանց ունեցող բայերին:

Ասվածից արդեն իսկ հետևում է, որ **ն** և **չ** ածանցներով բայերը լիարժեք չեն ներկայացված քննարկվող ձեռնարկներում. ավելին՝ առանձին դեպքերում, ինչպես տեսանք, նշվում են առհասարակ անգործածական կամ հնացած բառեր ու բառաձևեր, ինչպես՝ **թաքչել, փակչել, թանալ, բանալ, բսնել** ևն:

Հայտնի է, որ պատճառական **-ցն** ածանցը գործածվում է **-ն** և **-չ** սուսկաձանցով բայերի դեպքում՝ **հագնել-հագցնել, բուսնել-բուսցնել, կայչել-կայցնել, փախչել-փախց-նել** ևն: Բայց կան շեղումներ կամ բացառություններ: **Իջնել** բայը շեղվում է ընդհանուր կանոնից (>**իջեցնել**, փոխ. **իջցնել**)՝ բարեհնչության պահանջով, որի մասին հիշատակվում է միայն Ա. Մարգարյանի ձեռնարկում: Ձեռնարկներից և ոչ մեկում (այդ թվում նաև Մ. Ասատրյանի ձեռնարկում), սակայն, չեն քննարկվում մի շարք բայերի պատճառական իբրև թե կանոնական կազմությունները (**առչել - սառցնել, ուռչել - ուռցնել, պրծնել - պրծցնել**), որոնք, սակայն, մեր խորին համոզմամբ, հնացած են կամ գործածական չեն արդի գրական լեզվում: Առաջին երկուսի համար, մեր կարծիքով, սովորական են **սառել** և **ուռել** սկզբնատիպ բայերից կազմված **սառեցնել** և **ուռեցնել** ձևերը:

Եղանակային ձևեր: Երբ ստեղծվում էին քննարկվող ձեռնարկները, դրանից երկու-երեք տասնամյակ առաջ Հ. Բարսեղյանը և ուրիշ լեզվաբաններ **ա** խոնարհման աններածանց բայերի արգելական հրամայականի հոգնակի թվի համար ոչ միայն կանոնական, այլև նախընտրելի ձևեր էին սահմանում **մի** արգելական մասնիկով և անորոշ դերբայով կազմությունները, որոնցում անորոշի վերջի լ-ն փոխվում էր **ք**-ի՝ **մնալ-մի՛ մնաք, գնալ-մի՛ գնաք**: Նրանք ավելի սկզբունքային էին ածանցավոր բայերի արգելականի կազմության հարցում, քանի որ ընդունելի և գործածական էին համարում **մի** մասնիկով և անորոշի հիմքով ձևերը՝ **մի՛ մեծանա, մի՛ մոտենա, մի՛ թռչեք, մի՛ մեծանաք, մի՛ խոսեցնիր** և այլն¹: Մ. Ասատրյանը, անդրադառնալով ժամանակակից հայերենում արգելականի կազմության մասին նախորդների և հատկապես Հ. Բարսեղյանի այդ տեսակետին, գրում է, որ լեզվաբանի կողմից ներկայացվող օրինակաչափությունը այժմ փոխվում է. «Միսված չենք

¹ Տե՛ս **Բարսեղյան Հ.**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 318:

լինի, եթե ասենք, որ արդի հայերենում արգելական հրամայականի ձևերը կազմվում են դրական հրամայականից»¹, – գրում է նա: Այսինքն՝ **մի՛ փախչիր, մի՛ գտնիր, մի՛ փախչեք, մի՛ կարդաք, մի՛ բարձրանաք, մի՛ գտնեք** ձևերը, ըստ Ասատրյանի, վերածվում են հնաբանությունների կամ գտնվում են հնաբանություններ դառնալու ճանապարհին: Ա. Մարգարյանը հակված է, սակայն, պաշտպանելու Հ. Բարսեղյանի տեսակետը: Ի դեպ, նույն սկզբունքով է ներկայացվում նաև ներածանցավոր անկանոն բայերի արգելականը: Այդ մասին հանգամանորեն գրում է նաև Ֆ. Խլդաթյանը և անկանոն բայերի համար տալիս զուգաձևություններ՝ առանց որևէ մեկին նախապատվություն տալու, ինչպես՝ **մի՛ լինի(ր) - մի՛ լինեք // մի՛ եղիր - մի՛ եղեք, մի՛ տանիր - մի՛ տանեք // մի՛ տար - մի՛ տարեք, մի՛ դնիր - մի՛ դնեք // մի՛ դիր - մի՛ դրեք, մի՛ ելեք, մի՛ թողնիր - մի՛ թողնեք // մի՛ թող - մի՛ թողեք, մի՛ վեր կենա - մի՛ վեր կենաք // մի՛ վեր կաց - մի՛ վեր կացեք** ևն [ՖԽ 193-195]:

Գրական հայերենի գործածության փաստերը ցույց են տալիս, որ նախավոր ներկայի հիմքից կազմվող ձևերը արդեն հնացած են, դուրս են եկել գործածությունից, և այսօր կանոնական պետք է համարվեն **մի՛ դրական հրամայական** կաղապարով կազմությունները:

Տարակարծություններ կան **ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի արգելականի կազմության վերաբերյալ: Ասվում է, որ արդի գրական արևելահայերենում **ե** խոնարհման պարզ բայերի հոգնակի արգելականը կարող է կազմվել նաև անցյալի հիմքով՝ **մի՛ գրեցեք, մի՛ խոսեցեք**: Ըստ որում, դա ներկայացվում է որպես նախընտրելի տարբերակ իր զուգահեռի (**մի՛ գրեք, մի՛ խոսեք**) համեմատությամբ [ՄԱ 330]: Արգելականի այդպիսի կազմությունը որպես հնարավոր տարբերակ է ներկայացված նաև Ա. Մարգարյանի ձեռնարկում, ինչպես՝ **մի՛ գրեք//մի՛ գրեցեք** [ԱՄ 453]: Սա զուգահեռ ձև է համարում նաև Է. Աղայանը²: Մինչդեռ նորմատիվ քերականության շատ աղբյուրներում դրանք այսօր նշվում են որպես սխալ կամ անգործածական ձևեր: Հայոց լեզվի գործող դպրոցական դասագրքերում այդ ձևերը համարվում են անգործածական: Գրական հայերենի համար այդպիսի կազմություն չի նշվում նաև հայոց լեզվի ակադեմիական հրատարակության մեջ. «Արգելական հրամայականի հոգնակին, – կարդում ենք գրքում, – կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով **եք**..., այսպես՝ **մի՛ գրեք, մի՛ վագեք, մի՛ խմեք, մի՛ ջրեք**...»³: Կարելի է արձանագրել, որ արդի գրական հայերենում այդ ձևը այլևս անգործածական է և տեղը զիջել է իր զուգահեռին:

Անկանոն բայեր: Անկանոն բայերի ուսումնասիրությունը միշտ եղել է և

¹ **Ասատրյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Երևան, 1984, էջ 329:

² Տե՛ս **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 368:

³ **Աբրահամյան Ա., Պատնասյան Ն., Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974, էջ 417:

կմնա քերականագիտության կարևոր խնդիրներից մեկը, քանի որ բայ խոսքի մասի բառային կազմում առավել գործածական շերտը հենց անկանոն բայերն են: Պարբերաբար անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու այդ բայերին, քանի որ դրանցում կատարված փոփոխությունները, զարգացումները շատ դեպքերում գրքից գիրք են փոխանցվում՝ առանց որևէ ուսումնասիրության և վիճակագրության: Դա է պատճառը, որ հաճախ ձեռնարկներում ու դասագրքերում հայտնվում են անկանոն բայերի հնացած և գործածությունից դուրս եկած կազմություններ:

Ա. Մարգարյանի և Ֆ. Խլղաթյանի ձեռնարկներում նույնպես կան արդի գրական արևելահայերենի նորմի տեսակետից անկանոն բայերին վերաբերող մի շարք պնդումներ, որոնք այսօր քննության չեն դիմանում:

1. Ա. Մարգարյանի ներկայացրած անկանոն բայերի շարքը հետևյալն է՝ **առնել, ասել, բերել, զարկել, ուտել, անել, դնել, տանել, թողնել, ելնել, տեսնել, լինել, գալ, տալ, լալ, դառնալ, լվանալ, կենալ**, ինչպես նաև՝ **բանալ** և **բառնալ**. շուրջ քսան բայ [տե՛ս ԱՄ 468]: Հայտնի է, սակայն, որ վերջին երկուսը ներկայումս հնացած են և անգործածական. դրանց փոխարինել են **բացել, բարձել** տարբերակները: Վերը թվարկած շարքից որպես անկանոն բայ Ա. Մարգարյանը իրավացիորեն դուրս է թողնում **լվանալ**-ը: Իրականում, ինչպես այլ առիթով նշել ենք, **լվանալ** բայը պակասավոր է, թեև նմանության պատճառով հաճախ շփոթվում է **լվալ** բայի հետ¹: Իսկ ինչ վերաբերում է **անել** բայը անկանոնների շարքից դուրս թողնելուն, մեր կարծիքով, այնքան էլ ճիշտ չէ, քանի որ՝ ա) անցյալի հիմքում այդ բայը կրում է մասնակի փոփոխություններ՝ **անել-ար-ի//ար-եցի, ար-ած, ար-ա, բ)** անցյալ կատարյալում ունենում է գուգաձևեր՝ **արի//արեցի, արինք//արեցինք**, գ) հրամայականում շեղվում է նույն կազմության բայերի հարացույցից՝ **անել-արա** (ի տարբերություն կանոնավոր բայերի, օրինակ՝ **հագնել-հագ-իր**): Վերջին դեպքում Ա. Մարգարյանը հավանաբար ելնում է իր այն տեսակետից, որ **դնել, անել, տանել** և նման բայերը ներածանցավոր չեն, բայց ակնհայտ է, որ նույնիսկ պարզ բայեր համարվելու դեպքում էլ առկա է անկանոնություն:

Ֆ. Խլղաթյանը ևս անկանոն բայերի շարքում հիշատակում է **բանալ** սկզբնատիպ բայը, ինչպես նաև **լվանալ**-ը և **վեր կենալ**-ի բայական բաղադրիչը՝ **կենալ**-ը՝ որպես առանձին բառական միավոր [ՖԽ 193-195]: Առաջինների մասին արդեն նշեցինք: Ինչ վերաբերում է **կենալ** սկզբնատիպին, ապա ակնհայտ է, որ այն այսօր գործածական չէ, հանդիպում է միայն բարբառներում և գրական լեզվում փոխարինվել է **մնալ** սկզբնաձևով:

Ֆ. Խլղաթյանը անկանոն բայերի գուգաձևություններից որևէ մեկի գործառական հնարավորություններին առհասարակ չի անդրադառնում, առա-

¹ Տե՛ս **Աւետիսեան Եու.**, Ժամանակակից գրական արևելահայերենի անկանոն բայերի ուսումնասիրությունը եւ ուսուցումը // «Հայկազեան հայագիտական հանդես», Պեյրուք, 2019, էջ 502:

վելություն չի տալիս այս կամ այն ձևին, պարզապես ներկայացնում է բոլոր անկանոն բայերի հարացույցը՝ առանց որևէ բացատրության: **Ասել** բայի համար, օրինակ, լեզվաբանը նշում է՝ **ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին // ասի, ասիր, ասեց, ասինք, ասիք, ասին** տարբերակները [ՖԽ 193]: Մինչդեռ ակնհայտ է, որ գրական նորմի տեսակետից նշված գու-գաձևերը գործառական էական տարբերություններ են երևան հանում. գրական լեզվից ըստ էության դուրս են մղված երկրորդները՝ **ասի, ասինք, ասիք** ևն:

2. Ա. Մարգարյանը և Ֆ. Խլղաթյանը **գարկել** բայը համարում են գործածական սկզբնաձև¹ և գուգաձևություններով տալիս են անցյալ կատարյալի հարացույցը՝ **գարկեցի//գարկի, գարկեցիր//գարկիր** ևն: Հրամայականի գուգաձևեր են նշվում **գարկի ր-գարկեցե՞ք//գա՛րկ-գարկե՛ք** ձևերը: Նորմատիվ քերականության այլ աղբյուրներում պատկերը փոքր-ինչ այլ է. անցյալ կատարյալի համար կանոնական են համարվում ցոյական հիմքով **գարկեցի, գարկեցիր**.... ձևերը, իսկ արմատական **գարկ** հիմքով տարբերակները՝ ոչ հանձնարարելի. հրամայականի կանոնական ձևեր են նշվում **գարկի ր-ը** և **գարկեցե՞ք-ը**. փակագծում՝ նաև **գա՛րկ, գարկե՛ք**: Արևակ-ի տվյալները այսպիսին են՝ **գարկի՛ր՝ 79 / գա՛րկ՝ 1.047, գարկեցե՛ք՝ 48 / գարկե՛ք՝ 136**:

Արդի գրական լեզվի մեր դիտարկումներով, սակայն, պատկերը փոքր-ինչ այլ է: **Զարկել** սկզբնաձև բայը գրական գործող լեզվի տվյալներով փոխարինվել է կամ փոխարինվում է **խփել** կամ **հարվածել** սկզբնաձև բայերով: Հետևաբար խոնարհման հարացույցի երկու տարբերակներն էլ և՛ անցյալ կատարյալում, և՛ հրամայականում, և՛ առհասարակ այդ բայի խոնարհման ամբողջ հարացույցը պետք է համարել անգործածական և հնացած: Միգուցե տակավին վաղաժամ է ասել, որ **գարկել** բայը և հետևաբար նաև դրա եղանակաժամանակային ձևերը իսպառ դուրս են մղվել գրական լեզվից, բայց անկասկած է, որ առավել գործածական են փոխարինող բայերի ձևերը: Այդ մասին են վկայում նաև գրավոր գրական լեզվի վիճակագրական փաստերը:

3. Գրական լեզվից դուրս են մղվում **կենալ** բայի խոնարհված ձևերը՝ **կացա, կացար, կացավ** ևն: Ֆ. Խլղաթյանը հիշյալ բայի համար նշում է հարացույց (վեր) **կացա, կացար, կացավ, կացանք, կացաք, կացան** [ՖԽ 195]: Իսկ ահա Ա. Մարգարյանը հրամայականի դեպքում սկբնաձև է նշում նաև **կենալ** բայը՝ գործածելով այն առանց (վեր) բաղադրիչի՝ **կա՛ց, մի՛ կաց**: Նա **կաց** և **կեց** հիմքերով ձևերը ներկայացնում է որպես գուգաձևեր [ԱՄ 474]: **Կենալ** բայի համար նույնիսկ ընդունում է վաղակատար, հարակատար,

¹ Ա. Մարգարյանի գրքում հիշատակվող **գարնել**-ը՝ որպես **գարկել** բայի գուգաձևություն [ԱՄ 468], մեր կարծիքով այսօր հնացած է և ոչ գործածական, ինչպես նշվում է նաև այլ աղբյուրներում (տե՛ս **Աղաջանյան Ջ.**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007, էջ 318): Հետաքրքիր է նաև **Արևակ**-ի տվյալը՝ **գարկել՝ 466 // գարնել՝ 74**:

ենթակայական դերբայի գործածական գուգաձևեր՝ **կացել/կեցել եմ** (ես, է), **կացել/կեցել ենք** (եք, են), **կացած/կեցած, կացող/կեցող, կենող** [ԱՄ 474]: Այլ աղբյուրներ **կենալ** բայի հարացույցը ներկայացնում են **վեր** բաղադրիչով և հատուկ հիշեցումով, որ **կենալ**-ը «գրական հայերենում գործառում է **վեր կենալ** հարադրության մեջ»¹: Մենք նույնպես այդ կարծիքին ենք, և ինչպես արդեն նշել ենք, հնացած և անգործածական ենք համարում **կենալ** բայի և՛ սկզբնատիպ ձևը, և՛ բնականաբար նաև դրա դերբայական կամ խոնարհման ամբողջ հարացույցը: Բոլոր դեպքերում, առանձնաբար ներկայացվող **կենալ** բայը և դրա խոնարհված ձևերը արդի գրական լեզվում գործածական չեն և փոխարինվում են **մնալ** բայով ու դրա համապատասխան ձևերով՝ **մնացի, մնացիր, մնաց, մնացինք** ևն:

4. Մասնակի, բայց ուշագրավ տարբերություններ են նկատվում նաև **լալ** բայի հրամայականի կազմությունների վերաբերյալ: Արգելականի համար Ֆ. Խլղաթյանը նշում է՝ **մի՛ լա - մի՛ լաք/մի՛ լացիր - մի՛ լացեք** ձևերը: Ա. Մարգարյանը հավելում է **մի՛ լաց, մի՛ լար** գուգաձևերը («...արգելականի դեպքում **մի՛ լաց/մի՛ լացիր - մի՛ լացեք**, ինչպես նաև **մի՛ լա(ր) - մի՛ լաք** սկզբնապես ձևերով») [ԱՄ 474]: Հետաքրքիր է, որ **Արևակ**-ի տվյալներով **մի՛ լաց** ձևի համեմատ փոքր-ինչ ավելի գործածական է **մի՛ լա**-ն (**մի՛ լաց՝ 69, մի՛ լա՝ 109**), **մի՛ լացիր**-ը ավելի քիչ՝ **18**: Հոգնակիում ունենք ավելի անհամոզիչ պատկեր՝ **մի՛ լաք՝ 20 - մի՛ լացեք՝ 14**: Հավանաբար բնագրերի բնույթով է պայմանավորված այս պատկերը, որը և առանձին ուսումնասիրության նյութ է: Բայց գրական գործառվող լեզվի մեր դիտարկումներով՝ ավելի հաճախ գործածվող ձևեր են՝ **մի՛ լաց** և **մի՛ լացեք**:

5. Տարակարծություններ կան պակասավոր սկզբնատիպ բայերի, ինչպես նաև դրանց որոշ ձևաբանական հատկանիշների վերաբերյալ: Առանձին դիտարկումներ կամ հանձնարարվող ձևեր հակասության մեջ են կամ չեն համապատասխանում գործող ձևաբանական նորմի պահանջներին: Այսպես.

ա) Ա. Մարգարյանը պակասավոր բայերի շարքը ներկայացնելիս **արժեմ** բայի փոխարեն տալիս է **արժել** սկզբնաձևը, մինչդեռ մեր դիտարկումներով այս սկզբնաձևը չի հաստատվում կենդանի լեզվագործածությամբ: Է. Աղայանը «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում որպես սկզբնաձև նշում է **արժել** տարբերակը²: Ֆ. Խլղաթյանը 1999 թ. հայոց լեզվի 6-րդ դասարանի դասագրքում պակասավորների շարքը նշելիս տալիս է **արժեմ** ձևը, սակայն հարացույցում որպես սկզբնաձև նշում է **արժել**-ը³, որը նա մեքենաբար փոխանցում է բուհական ձեռնարկ [ՖԽ 196, 198]: Ս. Մալխասյանը

¹ Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 35:

² Տե՛ս Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2, Երևան, 1976, էջ 132:

³ Տե՛ս Խլղաթյան Ֆ., «Հայոց լեզու». հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Երևան, 1999, էջ 151:

արժեւ-ը և արժենաւ-ը միասին է ներկայացնում¹: «Հայերենագիտական բառարանում» ևս որպէս պակասավոր սկզբնաձև նշվում է **արժեւ** -ը²:

Ֆ. Խլղաթյանը պակասավորների շարքը հավելում է **կենաւ**-ով [ՖԽ 196], որի՝ որպէս անգործածական սկզբնաձև լինելու մասին արդէն ասվել է: Լեզվաբանը որպէս գործածական տարբերակներ տալիս է նույն բայի ըղձական եղանակի՝ (**կեցցեմ, կեց-ցես, կեցցե, կեցցենք, կեցցեք, կեցցեն**) և հրամայականի (**կա՛ց, կացե՛ք, մի՛ կենա, մի՛ կենաք**) հարացույցները [ՖԽ 197]: Մեր խորին համոզմամբ, սակայն, ինչպէս արդէն ասել ենք, **կենաւ** բայի ինչպէս այս, այնպէս էլ մյուս ժամանակաձևերը հնացած են: Ի դեպ, **կենաւ** պակասավոր բայը վերը նշած հարացույցով զետեղված է նաև նույն հեղինակի՝ 6-րդ դասարանի դասագրքում³:

բ) Ա. Մարգարյանը հավելավոր բայերի մասին խոսելիս **գիտենաւ** բայի համար անում է հետևյալ նշումը. «...չունի **-ում**-ով անկատար և գործածվում է սովորաբար **գիտենալիս – գիտենալու – գիտցել (//գիտեցել) – գիտցած (//գիտեցած) – գիտցող (//գիտեցող) – (չեմ) գիտենա** դերբայական և **գիտցի բ – գիտցե՛ք, մի՛ գիտցիր – մի՛ գիտցեք, մի՛ գիտենա(ր) – մի՛ գիտենաք, գիտենամ – գիտենաք, կգիտենամ – կգիտենանք, պիտի գիտենամ – պիտի գիտենանք** ձևերով» [ԱՄ 479-480]: Ակնհայտ է, որ գործածվող գրական լեզվում այս ձևերի մեծ մասը (օրինակ՝ գիտցել, գիտցող, գիտեցած, գիտցեք, մի՛ գիտենաք, կգիտենամ ևն) գործածական չէ: Դա են վկայում նաև **Արևակ**-ի տվյալները՝ **գիտենալիս՝ 0, գիտցել՝ 9, չեմ գիտենա՝ 0, մի՛ գիտցիր՝ 0, մի՛ գիտցեք՝ 0, մի՛ գիտենա(ր)՝ 1, մի՛ գիտենաք՝ 0, կգիտենամ՝ 2, կգիտենանք՝ 1, պիտի գիտենամ՝ 8, պիտի գիտենանք՝ 2**:

Այսպիսով: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի անհամապատասխանություններ կան գործող բուհական դասագրքերում արձանագրված ձևաբանական-բայական նորմի և գործածվող կենդանի գրական լեզվում ձևավորվող օրինաչափությունների միջև: Դրանք պետք է մշակվեն և որպէս կանոնական իրողություններ զետեղվեն նորմատիվ քերականության մատյաններում:

Յուրի Ավետիսյան, Սուսաննա Դավթյան – Արդի գրական արևելահայերենի ձևաբանական-բայական նորմը և գործող բուհական ձեռնարկները

Գրական լեզվի զարգացմանը զուգահեռ՝ ժամանակի ընթացքում անհամապատասխանություններ են առաջանում նորմատիվ քերականության գործող դասագրքերի և գործառվող գրական լեզվի օրինաչափությունների միջև: Դա արտահայտ-

¹ Տե՛ս **Մալխասեանց Սո.**, Հայերեն բացատրական բառարան, հ. առաջին, Ա-Ե, Երևան, 1944:

² Տե՛ս **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 512:

³ Տե՛ս **Խլղաթյան Ֆ.**, նշվ. աշխ., էջ 150:

վում է լեզվի բոլոր մակարդակներում: Այդ փոփոխությունները զգալի են նաև բայական համակարգում: Սույն հոդվածում ներկայացվում են արդի գրական արևելահայերենի ձևաբանական նորմում դրսևորվող տեղաշարժերը, մասնավորապես՝ անհամապատասխանությունները բուհական համակարգում գործածվող երկու դասագրքերում արձանագրված քերականական-ձևաբանական նորմի և կենդանի լեզվում գործառվող իրողությունների միջև: Մեր դիտարկումները հաստատվում են լեզվական փաստական նյութով, որը հիմնականում քաղված է **Արևակ** էլեկտրոնային կայքում գետեղված գրավոր աղբյուրներից:

Юрий Аветисян, Сусанна Давтян – Морфологическая глагольная норма современного восточноармянского литературного языка и современные вузовские учебные пособия

Ключевые слова – морфологическая глагольная норма, сдвиги, разногласия, используемые в настоящее время учебники, эквивалентные варианты, неиспользуемые грамматические формы, времена, сравнительный анализ

Наряду с развитием литературного языка со временем возникают несоответствия между образцами нормативной грамматики в существующих учебниках и используемом литературном языке. Это выражается на всех уровнях языка. Подобные изменения ощутимы в глагольной системе. В статье представлены сдвиги в морфологической норме современного литературного восточноармянского языка, в частности, несоответствия между грамматико-морфологической нормой, зафиксированной в двух учебниках, используемых в системе высшего образования, и реалиями, используемыми в живом языке. Наши наблюдения подтверждаются фактическим языковым материалом, который в основном взят из письменных источников, размещенных на сайте **Аревак**.

Yuri Avetisyan, Susanna Davtyan – Modern Literary Eastern Armenian Morphological-Verb Norm and Currently Used University Manual

Key Words – morphological-verb norm, shifts, disagreements, currently used textbooks, verb alternative variations, obsolete forms, tenses, comparative examination

Along with the development of literary language, over time inconsistencies arose between the patterns of the normative grammar in the existing textbooks and in the literary language in use. This is expressed at all levels of the language. These changes are significant in the verbal system. The article presents the shifts in the morphological norm of modern literary Eastern Armenian language, in particular, the discrepancies between the grammatical-morphological norm recorded in the two textbooks used in the higher education system and the realities used in the living language. Our observations are supported by linguistic factual material, which is mainly taken from written sources posted on the **Arevak** website.

Ներկայացվել է 28.06.2021

Գրախոսվել է 29.06.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021